2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 46 - Ն «24» Նոյեմբերի 2022

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների «Երաժշտություն» առարկայի ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/24/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թվականի նոյեմբեր 24-ի N 46 Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ և 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Երկրորդ դասարան

Թեմա 1	**Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը**
Նպատակներ 1. Ձևավորել գիտելիքներ երաժշտության ամենապարզ ժանրերի (տեսակների) մասին: 2. Ձևավորել կարողություններ դրանք ունկնդրելու, ընկալելու, կատարելու և ներկայացնելու համար: 3. Զարգացնել ճիշտ երգեցողության կանոններով երգելու կարողություններ: 4. Ձևավորել և զարգացնել ստեղծագործական կարողություններ:	**Ուղղորդող հարցեր** 1. Երաժշտության ի՞նչ տեսակներ գիտես: 2. Ո՞րն է դրանցից քեզ համար ավելի սիրելի:

Վերջնարդյունքներ

1. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով:
2. **Ճանաչի** երաժշտության պարզ ժանրերը (տեսակները):
3. **Երգի** (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:
4. **Բացատրի** ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի գույներով կամ նկարելով:
5. **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
6. **Ստեղծի** երաժշտական կերպար **ա**րտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:
7. Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, հաճախի համերգասրահներ, թանգարաններ:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
		Օրինաչափություն

1. Տարբեր բնույթի երգեր, պարեր, քայլերգեր: **2.** Դրանց տեսակները:	1. Սովորել և երգել բազմաբնույթ մանկական երգեր, պարեր, քայլերգեր: 2. Ունկնդրել տարբեր տեսակի երգեր, պարեր, քայլերգեր, բնութագրել և ներկայացնել: 3. Կատարել երաժշտառիթմական կամ պարային շարժումներ: 4. Կատարման ընթացքում ստեղծել երաժշտական կերպար:	Երաժշտության պարզ տեսակների միջև կապերի, օրինաչափության դիտարկում:

Միջառարկայական կապեր

1. **Մայրենի** - գրական հայերենով, ճիշտ ներկայացնել երաժշտության պարզ տեսակները և համեմատել գրականության հետ:
2. **Պար -** կատարել պարզ պարային շարժումներ:
3. **Ֆիզկուլտուրա -** Քայլերգերի ուղեկցությամբ քայլել հավասար և համաչափ քայլքով**:**

Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ
S1, S10, S27, S28, S30, S32

Ենթաթեմա 1	**Ուր են տանում մեզ այդ ժանրերը**
Նպատակներ 1. Ձևավորել երգի, պարի, քայլերգի զարգացման վերաբերյալ պատկերացումներ 2. Ձևավորել օպերայի, բալետի և սիմֆոնիայի մասին պատկերացումներ և գիտելիքներ: 3. Ձևավորել մանկական օպերաներից, բալետներից փոքրիկ հատվածներ ունկնդրելու, ընկալելու և կատարելու հմտություններ: 4. Ձևավորել և զարգացնել օպերայի, բալետի և սիմֆոնիկ երաժշտության մեջ երգային, պարային, քայլերգային երաժշտությունը ճանաչելու կարողություններ և հմտություններ: 5. Ձևավորել օպերայի, բալետի և սիմֆոնիայի նկատմամբ հատուկ վերաբերմունք՝ հետաքրքրություն:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ գիտես օպերայի, բալետի, սիմֆոնիայի մասին: 2. Երևանում որտե՞ղ է գտնվում օպերայի և բալետի թատրոնի շենքը: 3. Տեղյա՞կ ես, թե ինչ է ներկայացվում այնտեղ:

Վերջնարդյունքներ

1. Նկարագրի երգի, պարի, քայլերգի զարգացումը, օպերա, բալետ, սիմֆոնիա ժանրերը:
2. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ:
3. Ճանաչի օպերայի, բալետի և սիմֆոնիկ երաժշտության մեջ երգային, պարային, քայլերգային երաժշտությունը:

4. Ընկալի և ներկայացնի մեղեդու տրամադրությունը, բնույթն արտահայտի հույզերով, երգելով, պարելով, կամ սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով, նկարելով:
5. **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով:
6. Հայկական և այլ մանկական օպերաներից հատվածներ կատարելու ընթացքում, արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտական կերպարներ:
7. **Բացատրի,** թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաղորդակցվելու մանկական երաժշտական ստեղծագործություններին:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Հատվածներ մանկական օպերաներից, բալետներից, սիմֆոնիաներից (որտեղ առկա են երգի, պարի, քայլերգի տեսակները):	1. Ունկնդրել մանկական օպերաներից, բալետներից, սիմֆոնիաներից փոքրիկ հատվածներ և ներկայացնել երգի, պարի և քայլերգի զարգացումը, ձևափոխությունները: 2. Կատարել օպերաներից փոքրիկ հատվածներ: 3. Կատարել մանկական օպերայի հերոսների երգերը դերային խաղերով: 4. Նկարել երաժշտությունից ստացած տպավորությունները:	**Օրինաչափություն** Օպերայի, բալետի, սիմֆոնիայի միջև կապերի օրինաչափության դիտարկում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Հաղորդակցվելով բարձրարժեք երաժշտական ստեղծագործություններին ձևավորվում է սովորողի երաժշտական ճաշակը, նա դառնում է ստեղծարար և մշակույթն արժևորող անհատ:

Միջառարկայական կապեր

1. **Մայրենի -** գրական հայերենով, ճիշտ ներկայացնել սեփական մտքերը ուսումնասիրվող ստեղծագործության վերաբերյալ:
2. **Կերպարվեստ** - ստեղծել օպերային հերոսների նկարները կամ նկարչական ձևավորում:
3. **Տեխնոլոգիա** - պատրաստել թեմատիկ հերոսների տիկնիկներ:
4. **Թատրոն** – դերային խաղերով բեմադրել հատվածներ մանկական օպերաներից:

Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ
S1, S10, S16, S27, S28, S30, S32

Թեմա 2	**Ինչպես է ստեղծվում երաժշտությունը (երաժշտական այբուբեն)**

1. Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ երաժշտական հնչյունների և հնչյունաշարի մասին: 2. Ձևավորել և զարգացնել ձեռքի նշաններով հնչյունաշարի ձայնաստիճանները երգելու կարողություններ: 3. Ձևավորել պատկերացումներ «Մեղեդու»՝ որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացության մասին: **4.** Ձևավորել և զարգացնել մեղեդու տրամադրությունը, բնույթը ռիթմական կամ պարային շարժումներով ներկայացնելու կարողություն և հմտություն: 5. Ձևավորել և զարգացնել ստեղծագործական կարողություններ:	**Ուղղորդող հարցեր** 1. Ինչպե՞ս է ստեղծվում երաժշտությունը: **2.** Ո՞րն է երաժշտության այբուբենը: **3.** Ինչպե՞ս են երաժշտական հնչյունները վերածվում երաժշտության: **4.** Ի՞նչ է նշանակում մեղեդի: **5.** Ո՞րտեղից է այն հայտնվում: **6.** Իսկ դու կարո՞ղ ես հորինել մեղեդի:

Վերջնարդյունքներ

1. **Թվարկի** երաժշտական հնչյունների անունները, և ձեռքի նշաններով երգի հնչյունաշարի ձայնաստիճանները:
2. **Ընկալի** մեղեդին և երգի որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացություն:
3. **Ներկայացնի** երաժշտական նյութի բովանդակությունը կարճ համառոտ նախադասություններով,
4. **Կատարի համապատասխան** ռիթմական նվագակցություն կամ պարային շարժումներ:
5. **Տրված քառատողով հորինի ռիթմական պատկեր և մեղեդի:**

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
1. Երաժշտական այբուբեն. երաժշտական հնչյուններ, նոտաներ, 2. Երկար և կարճ, բարձր և ցածր, ուժեղ և մեղմ հնչյուններ: 3. Ձեռքի նշաններ: 4. Տարբեր բնույթի և բովանդակության երաժշտական ստեղծագործություններ ունկնդրման և կատարման համար:	1. Գործնական աշխատանքի միջոցով ներկայացնել երաժշտական հնչյունները, դրանց տևողությունը, բարձրությունը, ուժգնությունը: **2.** Ծանոթացնել ձեռքի նշաններին: 3. Ձեռքի նշաններով երգել հնչյունաշարի ձայնաստիճանները: 4. Ունկնդրվող և կատարվող ստեղծագործությունների միջոցով բացատրել մեղեդի և նվագակցություն հասկացությունները, դրանց բնույթը, բովանդակությունը, տեմբրը, ռեգիստրը:	**Համակարգեր և մոդելներ** Երաժշտական հնչյունները, ըստ իրենց բարձրության, միմյանց հետ որոշակի հարաբերակցության մեջ են, այսինքն՝ միասին վերցրած՝ կազմում են համակարգ: Երաժշտական համակարգի հնչյունները, ըստ բարձրության հաջորդականորեն դասավորված, կոչվում են հնչյունաշար, որի աստիճանները յոթն են և ունեն անուններ՝ դո, ռե, մի, ֆա…

Միջառարկայական կապեր

1. **Մայրենի -** գրական հայերենով, ճիշտ ներկայացնել հայոց այբուբենի, հնչյունների, տառերի մասին գիտելիքները և համեմատել երաժշտական հնչյունների հետ:
2. **Կերպարվեստ -** ներկայացնել կերպարվեստի տարրերը՝ գույնը, գիծը, նյութը և համեմատել նոտաների հետ:
3. **Մաթեմատիկա-**ներկայացնել թվերի համակարգը և համեմատել նոտաների հետ:

Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ
S1, S10, S27, S28, S30, S32

Ենթաթեմա 1	**Երաժշտական արտահայտչամիջոցներ**
Նպատակներ 1. Ձևավորել երաժշտական արտահայտչամիջոցների մասին պատկերացումներ և գիտելիքներ: **2.** Ձևավորել դրանք ճանաչելու, տարբերելու և մեկնաբանելու կարողություններ: 3. Ձևավորել և զարգացնել երաժշտական ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցները զգալու, ընկալելու և ներկայացնելու հմտություններ: 4. Զարգացնել ստեղծագործական կարողություններ: 5. Արժևորել ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցների դերը:	**Հիմնական հարցեր** 1. Ինչպե՞ս է կոմպոզիտորը ստեղծում որևէ երաժշտական ստեղծագործություն: 2. Կարո՞ղ ես մի քանի արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ երգ կամ մեղեդի:

Վերջնարդյունքներ
1. Թվարկի, ճանաչի և ներկայացնի երաժշտական արտահայտչամիջոցները:
2. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ, ներկայացնի արտահայտչամիջոցները:
3. **Ստեղծի** փոքրիկ մեղեդի տրված ռիթմով և արտահայտչամիջոցներով:
4. **Երգի** (մենակ կամ խմբով) ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ առոգանությամբ, արտահայտիչ
5. **Բնութագրի** ստեղծագործության բովանդակությունը կարճ համառոտ նախադասություններով, **նշի բնույթը և արտահայտչամիջոցները՝ տեմպը, դինամիկան, տեմբրը, ռեգիստրը:**
6. **Համեմատի** երաժշտության և գրականության, կերպարվեստի արտահայտչամիջոցները
7. Արժևորի ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցների դերը:

Թեմայի բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Տարբեր բնույթի, տեսակի ստեղծագործություններ և դրանցում կիրառված արտահայտչամիջոցները:	1. Ունկնդրել տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործություններ և որոշել արտահայտչամիջոցները:	**Պատճառ և հետևանք**

	2. Կատարել տարբեր երգեր՝ գի-տակցաբար փոփոխելով արտահայտ-չամիջոցները: 3. Հուզականորեն արձագանքել երաժշտական ստեղծագործությանը և կատարել ռիթմական կամ պարային շարժումներ: **4.** Տրված արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ ռիթմական պատկեր և մեղեդի:	Երաժշտական ստեղծագործությունների բովանդակության և երաժշտական արտահայտչամիջոցների պատճառահե-տևանքային կապի դիտարկում:
Միջառարկայական կապեր՝ **Մայրենի -** գրական հայերենով ներկայացնել երաժշտական արտահայտչամիջոցները: **Կերպարվեստ –** ներկայացնել կերպարվեստի արտահայտչամիջոցները՝ գունապնակ, գծի տեսակներ, նյութերի տեսակներ և այլն: **Թատրոն -** ներկայացնել թատերական արվեստի արտահայտչամիջոցները՝ դիմախաղ, մարմնի շարժումներ, ձայնի երանգներ և այլն:		
Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ **S1, S10, S16, S27, S28, S30, S32**		

Հինգերորդ դասարան

Թեմա 1. Երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունները, գեղարվեստական կերպար	**Ենթաթեմա 1. Երաժշտություն և գրականություն, երաժշտական ժանրեր՝ խմբերգ, ռոմանս, կանտատ և այլն, երաժշտական և գրական կերպարներ**
Նպատակներ 1. Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունների մասին: 2. Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ արվեստի տարբեր տեսակների գեղարվեստական կերպարների մասին: 3. Զարգացնել գեղարվեստական կերպարներին հուզական արձագանք և ապրումակցում դրսևորելու հմտություն:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ է արվեստը: 2. Արվեստի ո՞ր տեսակներին ես ծանոթ և ո՞րն է քեզ ավելի հետաքրքրում: 3. Ի՞նչ է նշանակում գեղարվեստական կերպար: 4. Ո՞ր առարկայի համատեքստում ես հանդիպել կերպարներին:

4. Ձևավորել երաժշտության և գրականության կապից առաջացած ժանրերը կատարելու, ներկայացնելու և վերլուծելու հմտություններ: 5. Արժևորել ազգային և համաշխարհային երաժշտական արվեստի ստեղծագործությունների բարձրարվեստ կատարումները:	5. Հաճախո՞ւմ ես արվեստի որևէ խմբակ: 6. Հաճախե՞լ ես որևէ համերգասրահ:

Վերջնարդյունքներ

1. Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ արվեստի տարբեր տեսակների և դրանց փոխառնչությունների մասին:
2. **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար:
3. **Դրսևորի** հուզական արձագանք և ապրումակցում գեղարվեստական կերպարների նկատմամբ:
4. **Ուսումնասիրի** երաժշտության և գրականության կապից առաջացած տարբեր ժանրերի ստեղծագործություններ և ներկայացնի գրավոր նյութ, օրինակ՝ էսսե դրանց ունկնդրումից ստացած իր տպավորությունների, հեղինակների, կատարողների մասին:
5. **Երգի** (մենակ կամ խմբով) երգեր, ռոմանսներ և խմբերգեր մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը:
6. **Վերլուծի** երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
7. **Արժևորի** արվեստի կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
8. Արժևորի ազգային և համաշխարհային հայտնի կատարողների և նվագախմբերի արվեստը:
9. Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

Թեմայի բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ** **Օրինաչափություն**
1. Արվեստը և նրա տեսակները: 2. Երաժշտության և գրականության կապը: 3. Այդ կապից առաջացած երաժշտական ժանրերը:	1. Ուսումնասիրել արվեստի տեսակների փոխառնչությունը: 2. Ունկնդրել և կատարել տարբեր բնույթի և տեսակի երաժշտական ստեղծագործություններ և ներկայացնել երաժշտական կերպարները: 3. Վերլուծել և մեկնաբանել գեղարվեստական կերպարները: 4. Ներկայացնել շրջակա միջավայրում որևէ պատմական հուշարձանին համապատասխան երաժշտական	Արվեստի տարբեր տեսակների գեղարվեստական կերպարների օրինաչափության դիտարկում:

	ստեղծագործություն և վերլուծել կերպարը: 5. Ներկայացնել երաժշտության և գրակա-նության կապից առաջացած երաժշտական ժանրերը, վերլուծել բովանդակության ընդհանրությունները և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:	

Միջառարկայական կապեր

1. **Հայոց լեզու և գրականություն** - կառուցի հայերեն գրագետ բանավոր և գրավոր խոսք, համեմատի գրական և երաժշտա-կան կերպարները, ընդգծի առանձնահատկությունները և ընդհանրությունները:
2. **Իմ հայրենիք -** Ներկայացնի երաժշտության անդրադարձը պատմական հայտնի կերպարներներին:
3. **Կերպարվեստ** - Շրջակա միջավայրում որևէ մշակութային հուշարձանին կամ արձանին համապատասխան երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46

Ենթաթեմա 2	**Երաժշտություն և կերպարվեստ, երաժշտական և կերպարվեստի կերպարներ**
Նպատակներ 1. Ձևավորել պատկերացումներ երաժշտության և կերպարվեստի փոխառնչության մասին («պատկերավոր» երաժշտություն և «հնչող» նկարներ): 2. Ձևավորել երաժշտության և կերպարվեստի փոխառնչությունն ուսումնասիրելու և մեկնաբանելու հմտություններ: 3. Ձևավորել երաժշտության և կերպարվեստի համանուն կամ նույն բնույթի, բովանդակության ստեղծագործությունները և դրանց արտահայտչամիջոցները համեմատելու, ընդհանրությունները և առանձնահատկություններն ընդգծելու հմտություններ: 4. Երաժշտության և կերպարվեստի փոխառնչության արժևորում:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ կապ կարող է լինել երաժշտության և կերպարվեստի միջև: 2. Կարո՞ղ ես համեմատել երաժշտության նրբերանգները կերպարվեստի գույների երանգների հետ:

Վերջնարդյունքներ

1. Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ երաժշտության և կերպարվեստի փոխառնչության, միևնույն բովանդակության ստեղծագործությունների արտահայտչամիջոցների ընդհանրությունների և առանձնահատկությունների մասին:
2. **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար:
3. **Վերլուծի և մեկնաբանի** «պատկերավոր» երաժշտություն և «հնչող» նկարներ հասկացությունները, ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով:
4. **Վերլուծի** և համեմատի, թե երաժշտության և կերպարվեստի ո՞ր արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ են հեղինակները ներկայացրել իրենց մտահղացումները: Գնահատի ըստ նշված չափանիշների:
5. **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր ժանրերի, ոճերի առաջացման վրա:
6. Ազգային երաժշտության և կերպարվեստի իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
1. Երաժշտություն և կերպարվեստ: 2. Դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: 3. Դրանցում առկա գեղարվեստական կերպարները և նրանց զարգացումը:	1. Համեմատել երաժշտության և կերպար 2. վեստի արտահայտչամիջոցները: 3. Ունկնդրել տարբեր ստեղծագործություններ և դիտել դրանց համապատասխան կերպարվեստի ստեղծագործություններ: 4. Վերլուծել և մեկնաբանել արվեստի այս երկու տեսակների փոխկապվածությունը: 5. Տրված երաժշտական կերպարին համապատասխան ստեղծել նկարչական կերպար: 6. Շրջակա միջավայրում որևէ պատմական հուշարձանին համապատասխան երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն:	**Օրինաչափություն** Երաժշտության և կերպարվեստի գեղարվեստական կերպարների օրինաչափության դիտարկում: **Կառուցվածք և գործառույթ** Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով և արտահայտչամիջոցներով են պայմանավորված արվեստի ստեղծագործությունների շատ գործառույթներ:

Միջառարկայական կապեր

Գրականություն - Ներկայացնել երաժշտության և կերպարվեստի կապը գրագետ կապակցված խոսքով: **Կերպարվեստ -** Նկարել երաժշտական ստեղծագործությունից ստացած տպավորությունները և զգացողությունները:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**	
Ենթաթեմա 3	**Երաժշտություն և պարարվեստ. ժողովրդական, դասական, ժամանակակից պարեր, երաժշտական և պարային կերպարներ**
Նպատակները 1. Ձևավորել երաժշտության և պարարվեստի փոխառնչության մասին պատկերացումներ: 2. Ձևավորել և զարգացնել երաժշտության և պարարվեստի փոխկապվածությունը ուսումնասիրելու և մեկնաբանելու հմտություններ: 3. Ձևավորել պարային երաժշտություն և տարբեր ժանրերի պարային շարժումներ կատարելու, ներկայացնելու, համեմատելու և դրանց համապատասխանությունը մեկնաբանելու հմտություններ: 4. Արժևորել պարարվեստի ազգային և համաշխարհային հայտնի կատարողների արվեստը:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ տեղ ունի պարը քո կյանքում: 2. Երաժշտություն ունկնդրելիս հաճա՞խ ես պարում: 3. Կարո՞ղ ես պարել առանց երաժշտության:
Վերջնարդյունքներ 1. Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ կամ սահիկահանդես երաժշտության և պարարվեստի կապի մասին: 2. **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար: 3. **Ներկայացնի և հիմնավորի** տարբեր ժանրերի պարային և երաժշտական կերպարների առանձնահատկությունները, ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով: 4. **Վերլուծի**, թե երաժշտության և պարարվեստի արտահայտչամիջոցներից ո՞րի կիրառման շնորհիվ են հեղինակները ներկայացրել իրենց մտահղացումները, երաժշտության բնույթի և պարային շարժումների համապատասխանությունը: **5.** Ազգային երաժշտության և պարարվեստի իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար: **6. Արժևորի** բարձրարվեստ պարային կատարումները:	

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ Օրինաչափություններ**
1. Երաժշտության և պարարվեստի կապը:	1. Ունկնդրել և դիտել պարային երաժշտություն:	

2. Դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: 3. Ժողովրդական, դասական և ժամանակակից պարեր: 4. Երաժշտական և պարային կերպարներ:	2. Կատարել պարային շարժումներ կամ ամբողջական պարեր: 3. Դիտել տեսաերիզներ պարային խմբերի ելույթներից: 4. Վերլուծել և մեկնաբանել երաժշտության և պարարվեստի կապը:	Երաժշտության և պարարվեստի գեղարվեստական կերպարների օրինաչափության դիտարկում: **Կառուցվածք և գործառույթ** Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Կառուցվածքով և արտահայտչամիջոցներով են պայմանավորված արվեստի ստեղծագործությունների շատ գործառույթներ:
Միջառարկայական կապեր 1. **Հայոց լեզու և գրականություն -** Կազմի գրագետ բանավոր և գրավոր խոսք ներկայացնելու համար պարարվեստի և երաժշտության փոխառնչությունները: 2. **Պարարվեստ -** Համեմատի ժողովրդական, դասական և ժամանակակից պարային շարժումները և երաժշտությունը:		
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**		

Թեմա 2	**Կինոյի և թատրոնի երաժշտություն, երաժշտությունը լրատվամիջոցներում՝ գովազդներում, հեռուստահաղորդումներում, երաժշտությունը և համակարգիչը**
1. **Նպատակներ** 2. Ձևավորել և զարգացնել գիտելիքներ թատրոնի և կինոյի երաժշտության մասին: 3. Ձևավորել և զարգացնել գիտելիքներ հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտության մասին: 4. Ձևավորել գիտելիքներ դրանց նպատակի, միջոցների, բնույթի, կառուցվածքի մասին: 5. Ձևավորել դրանք կատարելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ նշանակություն ունի երաժշտությունը թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների համար: 2. Հրապուրվու՞մ ես հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտությամբ: 3. Կա՞ թատրոնի կամ կինոյի երաժշտություն, որը հաճախ կատարվում է համերգասրահներում: **4.** Ունե՞ս նախընտրած սաունդթրեքներ:

6. Ձևավորել ու զարգացնել քննադատական մտածողու-թյուն և գնահատող վերաբերմունք դրանց նկատմամբ: 7. Կարևորել նոր տեխնոլոգիաների դերը երաժշտության կատարման և տարածման գործում: **8.** Արժևորել թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների բարձրորակ երաժշտական ձևավորումները:	

Վերջնարդյունքներ

1. **Երգի** (մենակ կամ խմբով) երգեր և խմբերգեր կինոերաժշտությունից կամ թատրոնի երաժշտությունից մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:
2. **Վերլուծի** թատրոնի և կինոյի երաժշտությունը, որոշի, թե ինչպես է երաժշտությունը նպաստում դրանց հիմնական գաղափարի բացահայտմանը և որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը:
3. **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
4. **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում, և **արժևորի** դրանց միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
5. **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը երաժշտական նոր ժանրերի, ոճերի, ուղղությունների առաջացման վրա:
6. **Արժևորի** երաժշտության դերը կինոյի, թատրոնի, հեռուստահաղորդումների և գովազդների մեջ:

Թեմայի բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
1. Թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների, գովազդների երաժշտություն: 2. Դրանց տեսաերիզների դիտում: 3. Դրանց համերգային կատարումներ:	1. Ունկնդրել կամ դիտել տեսանյութեր թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտություն: 2. Կատարել, վերլուծել և մեկնաբանել դրանք:	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների հետ հաղորդակցվելու միջոցով գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում**:**

	3. Կազմակերպել քննարկումներ, ցուցաբերել քննադատական վերաբերմունք: 4. Արժևորել դրանց կարևորությունն արվեստի այդ տեսակների իմաստը, հիմնական գաղափարն ավելի տպավորիչ դարձնելու համար:	

Միջառարկայական կապեր

1. **Գրականություն –** Գեղեցիկ, գրական հայերենով վերլուծել ուսուցանվող ստեղծագործությունների սցենարները և սյուժեները:
2. **Թատրոն** - Վերլուծել թատերական երաժշտության դերն ու նշանակությունը, ընդգծել և ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերի նպատակների, սկզբնաղբյուրների ընդհանրությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:
3. **Կինո**- Վերլուծել երաժշտության՝ սաունդթրեքի համապատասխանությունը կինոյի սցենարին:
4. **Մեդիաարտ** – Վերլուծել և մեկնաբանել հեռուստածրագրերի, հաղորդումների, գովազդների երաժշտության գաղափարը, համապատասխանությունը հաղորդման թեմային, դրսևորել գնահատող վերաբերմունք:
5. **Կերպարվեստ -** Մեկնաբանել բեմական ձևավորումների դերն ու նշանակությունն արվեստի տվյալ ստեղծագործության մեջ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:
Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46

7-րդ դասարան

<table>
<tr><td colspan="2">Թեմա 1.
Հանրամատչելի երաժշտություն
Հայ ազգային երգեր և պարեր</td></tr>
<tr><td>Նպատակներ
1. Ձևավորել հանրամատչելի երաժշտության վերաբերյալ պատկերացումներ
2. Ձևավորել և զարգացնել գիտելիքներ ազգային պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին
3. Կարևորել ազգային երգ ու պարի ուսուցման միջոցով սովորողների հայեցի դաստիարակության, ազգային ինքնության գիտակցության, ինքնաճանաչողության և հայ քաղաքացի դաստիարակելու գործում:
4. Ձևավորել թատերականացված գործողություններում ազգային ավանդական մշակույթի տեսակների շաղկապվածությունն ու ներդաշնակությունը հասկանալու հմտություններ:
5. Արժևորել հայ ազգային արվեստի ավանդույթները:</td><td>Ուղղորդող հարցեր
1. Ի՞նչ նշանակություն ունի քեզ համար ազգային երգ ու պարը:
2. Ծանո՞թ ես դրանց ծագումնաբանությանը, զարգացմանը:
3. Ձեր ընտանեկան տոնախմբությունների ժամանակ կատարու՞մ եք ազգային երգ ու պար:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ
1. Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:
2. Ներկայացնի ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:
3. Ընտրի ազգային ռիթմական նվագարաններ և ստեղծի համապատասխան ռիթմական նվագակցություն:
4. Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:
5. Բացատրի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:
6. Արժևորի երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլան միջոց, կարևորի ազգային ավանդույթները:</td></tr>
</table>

Թեմայի բովանդակությունը	Առաջարկվող գործունեության ձևերը	Խաչվող հասկացություններ
1. Դիդակտիկ նյութեր: 2. Պարերի, երգերի, երաժշտության գրառումներ: 3. Տեսահոլովակներ ազգային երգ ու պարի կատարումներով:	1. Ուսումնասիրել ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը: 2. Դիտել համապատասխան տեսահոլովակներ: 3. Սովորեցնել ազգային պարային տարրեր, ամբողջական պարեր և պարերգեր: 4. Բեմադրել ժողովրդական ավանդույթներ և ծեսեր:	**Անհատներ և հարաբերություններ** Ազգային արժեքների պահպանման գործում արժևորել անհատի գործոնը, անհատը պետք է դառնա դրանց կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

Միջառարկայական կապեր

1. **Հայ գրականություն -** Գեղեցիկ և գրագետ հայերենով ներկայացնել այն գրական ստեղծագործությունները, որոնցում առկա են ժողովրդական ծեսեր, ազգային ավանդույթներ:
2. **Հայոց պատմություն** - Մեկնաբանել ժողովրդական ավանդույթները ազգային երգ ու պարի համատեքստում:
3. **Պարարվեստ** - Ուսումնասիրել ազգային երգերի ու պարերի փոխկապակցվածությունը:
4. **Թատրոն** - Բեմադրել ազգային ավանդույթներից, ծեսերից հատվածներ, կազմակերպել տվյալ թեմայով դասարանական, դպրոցական կամ համայնքային միջոցառում:
5. **Կերպարվեստ** - Ներկայացնել ազգային զարդանախշերը:
6. **Տեխնոլոգիա** - Ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի ազգային տարազները, խոհանոցը:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:
Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46

Թեմա 2.
Հայ աշուղական արվեստ

Նպատակներ	Ուղղորդող հարցեր
1. Ընդլայնել գիտելիքները հայ ազգային երաժշտության ճյուղերից մեկի՝ գուսանա-աշուղական երգարվեստի մասին: 2. Խորացնել գիտելիքները միջնադարյան գուսանների և աշուղական արվեստի նշանավոր ներկայացուցիչների մասին: 3. Զարգացնել հմտություններ աշուղական երգերն ունկնդրելու, ճանաչելու, գնահատելու և պատշաճ կատարելու համար: 4. Արժևորել հայ աշուղական արվեստը:	**1.** Ի՞նչ է հայ գուսանա-աշուղական երգ-արվեստը: **2.** Սիրո՞ւմ ես այս ժանրը, հաճա՞խ ես ունկնդրում, կամ կատարում: **3.** Կա՞ն աշուղներ, որոնց արվեստը սիրում և գնահատում են ձեր ընտանիքում: 4. Աշուղներից ո՞ւմ ես նախընտրում:

Վերջնարդյունքներ

1. **Ունկնդրի և կատարի** հայ աշուղական արվեստի նմուշները:
2. **Ներկայացնի** հետազոտական կամ նախագծային աշխատանք «Հայ աշուղական արվեստ» թեմայով:

3. **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, **արտահայտի** սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն **ներգրավվի** քննարկումների, բանավեճերի մեջ: 4. **Արժևորի** հայ աշուղական արվեստը և **ցուցաբերի** պատշաճ վերաբերմունք՝ սեր և հետաքրքրություն:		
Թեմայի բովանդակությունը 1. Հայկական գուսանա-աշուղական արվեստ: **2.** Հայտնի աշուղների կյանքը և ստեղծագործական գործունեությունը: 3. Աշուղական երգեր:	**Առաջարկվող գործունեության ձևեր** 1. Ուսումնասիրել հայկական գուսանա-աշուղական արվեստը: 2. Ունկնդրել, վերլուծել, գնահատել աշուղական արվեստը: **3.** Կատարել աշուղական հայտնի երգերը և մեկնաբանել իրենց կատարումները:	**Խաչվող հասկացություններ** **Անհատներ և հարաբերություններ** Ազգային արժեքների պահպանման գործում արժևորել անհատի գործոնը, անհատը պետք է դառնա դրանց կրողը, պահպանողը, զարգացնողը և սերունդներին փոխանցողը:
Միջառարկայական կապեր **1. Հայ ժողովրդի պատմություն –**ներկայացնել աշուղական արվեստի ծագումը և զարգացումը հայ միջնադարյան արվեստի պատմության համատեքստում: **2. Գրականություն -** Գեղեցիկ բանավոր կամ գրավոր խոսքով ներկայացնել Սայաթ-Նովայի գրական ստեղծագործությունները և համեմատել նրա երգերի հետ: **3. Կինո -** Դիտել «Սայաթ-Նովա» և «Նռան գույնը» ֆիլմերը, քննարկել և դրսևորելել գնահատող վերաբերմունք: **4. Օպերա -** Դիտել հատվածներ Ալ. Հարությունյանի «Սայաթ Նովա» օպերայից:		
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**		

Թեմա 3. **Ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը**	
Նպատակներ 1. Ընդլայնել գիտելիքները հայ ժամանակակից կոմպոզիտորների կյանքի ու ստեղծագործական գործունեության, նրանց երգարվեստի մասին: 2. Զարգացնել կարողություններ և հմտություններ հայ ժամանակակից երգարվեստի նմուշների կատարման և մեկնաբանման համար: 3. Արժևորել հայ ժամանակակից երգարվեստը:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ գիտես հայ ժամանակակից երգարվեստի մասին: **2.** Ճանաչո՞ւմ ես ժամանակակից կոմպոզիտորներին: **3.** Սիրո՞ւմ ես նրանց երգերը:

	4. Ձեր ընտանիքում հաճա՞խ եք ունկնդրում այդ երգերը: 5. Ո՞ւմ երգերն եք նախընտրում:

Վերջնարդյունքները

1. **Կատարի** ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:
2. **Մեկնաբանի** հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:
3. **Ներկայացնի** իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը բանավոր ելույթների, իսկ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը՝ էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:
4. **Վերլուծի և** մեկնաբանի ժամանակակից հայ կոմպոզիտորների կողմից որևէ ժողովրդական երգի մշակում:
5. **Արժևորի** երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց, արժևորի ազգային արվեստը:

Թեմայի բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
1. Ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: 2. Ժամանակակից հայ երգարվեստ:	1. Ուսումնասիրել ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: 2. Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել կոմպոզիտորների երգերը: 3. Կատարել և գնահատել ժամանակակից հայ կոմպոզիտորների երգերը:	**Անհատներ և հարաբերություններ** Ազգային արժեքների պահպանման գործում արժևորել անհատի գործոնը, անհատը պետք է դառնա դրանց կրողը, պահպանողը, զարգացնողը և սերունդներին փոխանցողը:

Միջառակայական կապեր

1. **Գրականություն –** Ներկայացնել գեղեցիկ հայերենով ժամանակակից հայ բանաստեղծների (երգերի բառերի հեղինակներին) պոեզիան:
2. **Մշակույթ -** Ուսումնասիրել հայ ժամանակակից երգարվեստը ժամանակակից ազգային արվեստի համատեքստում:
3. **Կերպարվեստ –** Ներկայացնել և համեմատել հայ ժամանակակից կերպարվեստի ստեղծագործությունները ժամանակակից երգարվեստի հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

<table>
<tr><td colspan="3">Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="3">Թեմա 4.
Դասական հանրամատչելի երաժշտություն</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ
1. Ձևավորել դասական հանրամատչելի երաժշտության մասին պատկերացումներ և գիտելիքներ:
2. Ձևավորել և զարգացնել դասական հանրամատչելի ստեղծագործություններն ընկալելու, բնութագրելու, մեկնաբանելու և իր նախասիրությունները ներ-կայացնելու հմտություններ
3. Ձևավորել գեղագիտական ճաշակ, սեփական կարծիք արտահայտելու հմտություն և այլ կարծիքների վերաբերյալ հարգանքի դրսևորում:
4. Արժևորել դասական հանրամատչելի երաժշտությունը:</td><td>Ուղղորդող հարցեր
1. Քո կարծիքով կարո՞ղ է դասական երաժշտությունը հանրամատչելի լինել:
2. Կա՞ն դասական ստեղծագործություններ, որոնք կարող ես անընդհատ ունկնդրել կամ կատարել:
3. Ի՞նչ նախասիրություններ ունես, հիմնավորի:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ
1. Ներկայացնի դասական հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:
2. Ներկայացնի իր անձնական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով:
3. Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումներում, բանավեճերում, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը:
4. Բացատրի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրու-թյունները:
5. Փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում համերգասրահների և թանգարանների այցելություններից ստացած տպավորությունները:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն
Դասական հանրամատչելի երաժշտություն:</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր
1. Ունկնդրել, կատարել, վերլուծել, մեկնաբանել դասական հանրամատչելի երաժշտության նմուշները:
2. Մեկնաբանել սեփական երաժշ-տական ճաշակը, ներկայացնել</td><td>Խաչվող հասկացություններ

Կողմնորոշում ժամանակի և տարածու-թյան մեջ
Սովորողները, ծանոթանալով դասական հանրամատչելի երաժշտության նմուշներին, բացահայտում են դրանց ստեղծման ժամանակաշրջանը, արժեք-ները, մշակույթը, հասկանում են, որ բարձրարժեք ստեղծագործությունները</td></tr>
</table>

	նախընտրած ստեղծագործու-թյունների մասին շնորհանդեսներ: **3.** Մասնակցել տվյալ թեմայի մասին քննարկումներին, բանավեճերին, հարգել ուրիշների կարծիքը, հիմնավորել սեփական կարծիքը:	դիմանում են ժամանակի քննությանը և նրանցում արտացոլված գաղափարները արդիական են բոլոր ժամանակներում:
Միջառարկայական կապեր 1. **Մայրենի –** Գեղեցիկ և գրագետ հայերենով ներկայացնել դասական հանրամատչելի գրական ստեղծագործությունները և նշել դրանց հիման վրա ստեղծված երաժշտական ստեղծագործությունները: 2. **Օտար լեզուներ -** Ներկայացնել դասական հանրամատչելի օտարալեզու գրական ստեղծագործությունները, որոնք հետագայում երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների հիմք են դարձել: 3. **Մշակույթ –** Ներկայացնել դասական հանրամատչելի արվեստի նմուշներ: 4. **Կերպարվեստ –** Ներկայացնել դասական կերպարվեստի ստեղծագործություններ, որոնք մատչելի և հասկանալի են բոլորի համար:		
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**		

Միջնակարգ ծրագիր
10-րդ դասարան

<table>
<tr><td colspan="3">Թեմա 1.
Հայ հոգևոր երաժշտության ծնունդն ու զարգացումը: Շարականներ, տաղեր, գանձեր:</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ
1. Ձևավորել հայ հոգևոր երաժշտության պատմությունը հետազոտելու հմտություններ:
2. Ընդլայնել հոգևոր երաժշտության վերաբերյալ գիտելիքները:
3. Զարգացնել հայ հոգևոր երաժշտության և նրա երախտավորների մասին հետազոտական կամ նախագծային աշխատանքներ ներկայացնելու հմտություններ:
4. Զարգացնել հայ հոգևոր երաժշտությունն ընկալելու, վերլուծելու, կատարելու և մեկնաբանելու հմտություններ:
5. Արժևորել հայ հոգևոր երաժշտությունը:</td><td>Ուղղորդող հարցեր
1. Ի՞նչ ես հասկանում՝ հոգևոր երաժշտություն ասելով:
2. Ծանո՞թ ես այդ ժանրին:
3. Երբևէ ներկա եղե՞լ ես Պատարագի արարողությանը:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ
1. Ստեղծի (մենակ կամ խմբով) հայ հոգևոր երաժշտությանը նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտական աշխատանք:
2. Հաղորդակցվի և ինքնարտահայտվի հայ հոգևոր երաժշտության միջոցով՝ երգի (մենակ կամ խմբով) հայ հոգևոր երաժշտության նմուշներ, նաև երկձայն, հստակ առոգանությամբ, ներշնչանքով, արտահայտիչ, զարգացնելով մեղեդային գիծը:
3. Ընկալի և մեկնաբանի հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:
4. Գիտակցի, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը
1. Հայ հոգևոր երաժշտության ձևավորումը և զարգացումը
2. Հայ հոգևոր երաժշտություն՝ շարականներ, տաղեր, գանձեր:
3. Հայ հոգևոր երաժշտությունը մեր օրերում.</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր
1. Ուսումնասիրել հայ հոգևոր երաժշտության պատմությունը:
2. Ունկնդրել, կատարել, մեկնաբանել հայ հոգևոր երգարվեստի</td><td>Խաչվող հասկացություններ
Անհատներ և հարաբերություններ
Ազգային արժեքների պահպանման գործում արժևորել անհատի գործոնը, անհատը պետք է դառնա դրանց կրողը, պահպանողը, զարգացնողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
</table>

	նմուշները և հատվածներ Սուրբ Պատարագից: 3. Ներկայացնել թեմատիկ զեկույցներ, անհատական կամ խմբային հետազոտություններ, նախագծեր և այլն:	

Միջառարկայական կապեր

1. **Գրականություն** – Գեղեցիկ և գրագետ հայերենով մեկնաբանել հայ հոգևոր երգերի գրական հիմքերը և նրանց գաղափարը:
2. **Կերպարվեստ** -Ուսումնասիրել հայ հոգևոր մանրանկարչությունը, զարդարվեստը, ճարտարապետությունը և համեմատել հայ հոգևոր երգերի հետ:
3. **Հայոց պատմություն** - Ուսումնասիրել և մեկնաբանել վերոնշյալ ժամանակաշրջանի հայոց պատմության կարևոր իրադարձությունները:
4. **Մշակույթ** – Ուսումնասիրել հայ միջնադարյան հոգևոր արվեստը:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

Մ1, Մ17, Մ24, Մ25, Մ26, Մ40, Մ41, Մ42:

Թեմա 2. XVII-XVIII դդ. եվրոպական արվեստը՝ բարոկկո	
Նպատակները 1. Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ XVII-XVIII դդ. եվրոպական արվեստի մասին 2. Ձևավորել գիտելիքներ XVII-XVIII դդ. ստեղծագործած հայտնի կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունների մասին: 3. Զարգացնել տվյալ թեմայով հետազոտական կամ նախագծային աշխատանքներ ներկայացնելու հմտություններ: 4. Արժևորել XVII-XVIII դդ. եվրոպական արվեստը:	**Ուղղորդող հարցեր** 1. Ի՞նչ է նշանակում «եվրոպական արվեստ»: 2. Ծանո՞թ ես «բարոկկո» ուղղությանը: 3. Ունկնդրե՞լ ես այդ ուղղության որևէ ստեղծագործություն:

Վերջնարդյունքներ

1. **Ստեղծի** (մենակ կամ խմբով) տվյալ ժամանակաշրջանի եվրոպական երաժշտությանը նվիրված հետազոտություն կամ նախագիծ:
2. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ազգերի բարոկկո ոճի երաժշտության միջոցով՝ համադրելով երաժշտական կերպարների յուրահատկությունները:
3. **Ընկալի և մեկնաբանի** հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:
4. **Հասկանա, ընկալի և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ:
5. **Արժևորի** երաժշտության դերն ու նշանակությունն իր կյանքում:

Թեմայի բովանդակությունը	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
XVII-XVIII դդ. եվրոպական արվեստ և հանրահայտ ստեղծագործություններ:	1. Ծանոթանալ XVII-XVIII դդ. եվրոպական արվեստին և հանրահայտ ստեղծագործություններին: 2. Ունկնդրել, քննարկել, վերլուծել դրանք: 3. Կատարել ուսումնասիրություններ տվյալ ժամանակաշրջանի երաժշտական ավանդույթների վերաբերյալ:	**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Սովորողներն ուսումնասիրում են տվյալ ժամանակաշրջանում ստեղծագործած հանրահայտ կոմպոզիտորների կյանքը, նրանց ստեղծագործական գործունեությունը, մարդկության պատմության շրջադարձային փուլերը, հայտնագործությունները, ինչպես նաև անհատների և հասարակության հարաբերությունները: Արժևորում են նրանց ավանդը տվյալ հասարակության զարգացման գործում:

Միջառարկայական կապեր

1. **Կերպարվեստ** - Ուսումնասիրել XVII-XVIII դդ. եվրոպական կերպարվեստի բարոկկո ոճի նկարիչների ստեղծագործությունները և համեմատել երաժտության հետ:
2. **Գրականություն** – Ուսումնասիրել XVII-XVIII դդ. եվրոպական գրականությունը:
3. **Համաշխարհային պատմություն –** Մեկնաբանել XVII-XVIII դդ. եվրոպական պատմության կարևոր իրադարձությունները, որոնք ազդեցություն են ունեցել արվեստի զարգացման վրա:
4. **Թատրոն -** Ուսումնասիրել XVII-XVIII դդ. եվրոպական թատերական արվեստը:
5. **Մշակույթ** – Ուսումնասիրել XVII-XVIII դդ. բարոկկո ոճի եվրոպական ճարտարապետական հուշարձանները:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ1, Մ24, Մ25, Մ26, Մ40, Մ41, Մ42:

Թեմա 4. Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչներ

Նպատակներ	**Ուղղորդող հարցեր**
1. Խորացնել գիտելիքներր վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների, նրանց կյանքի և ստեղծագործական գործունեության մասին: 2. Զարգացնել նրանց հայտնի ստեղծագործությունները ուսումնասիրելու, վերլուծելու, սեփական նախասիրությունները ներկայացնելու հմտություններ: 3. Զարգացնել տվյալ թեմայով նախագծային կամ հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ: 4. Արժևորել նրանց դերը երաժշտության պատմության զարգացման գործում:	1. Լսե՞լ ես վիեննական դասական դպրոցի մասին: 2. Ինչու՞ էր կոչվում Վիեննական դպրոց: 3. Վիեննական դասական դպրոցի կոմպոզիտորներից որի՞ մասին գիտես: 4. Ու՞մ ստեղծագործությունն ես ավելի շատ սիրում: 5. Ներկա եղե՞լ ես երբևէ նրանց ստեղծագործությունների կատարմանը, եթե այո, ի՞նչ տպավորություն ես ստացել:

Վերջնարդյունքներ

1. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ազգերի դասական երաժշտության միջոցով՝ մեկնաբանելով երաժշտական կերպարների յուրահատկությունները:
2. **Ստեղծի** տվյալ թեմայով նախագծային կամ հետազոտական աշխատանք:
3. **Վերլուծի և մեկնաբանի** տվյալ ժամանակաշրջանի տարբեր ժանրերի ստեղծագործությունները և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:
4. **Հասկանա, ընկալի և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ:
5. **Բացատրի**, թե ինչ դեր ունի երաժշտությունն իր կյանքում, և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը՝ որպես իր կյանքի անքակտելի մաս:
6. **Արժևորի** բարձրորակ կենդանի կատարումները և հաճախակի այցելի համերգասրահներ և թատրոններ:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
XVIII - XIX դդ. առաջին քառորդի եվրոպական արվեստ: Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործական գործունեությունը:	1. Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգներից հատվածներ: 2. Այցելել կոմպոզիտորների թանգարանները (առցանց): 3. Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել դասական ստեղծագործությունները: 4. Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, ներկայացնել շնորհանդեսներ, նախագծեր:	**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Սովորողները, ուսումնասիրելով Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների կյանքը և ստեղծագործական գործունեությունը, ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղին, նրանց պատմություններին, համերգային շրջագայություններին, մարդկության պատմության շրջադարձային ժամանակահատվածներին, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերություններին, արժևորում են նրանց արվեստը և ավանդը երաժշտության պատմության զարգացման մեջ:
Միջառարկայական կապեր 1. **Կերպարվեստ** - Ուսումնասիրել XVIII - XIX դդ. առաջին կեսի եվրոպական կերպարվեստի նմուշները և համեմատել երաժշտության հետ: **2. Համաշխարհային պատմություն -** Ուսումնասիրել XVIII -XIX դդ. առաջին կեսին Եվրոպայում կատարվող պատմական իրադարձությունները, որոնք ազդեցություն են ունեցել երաժշտության զարգացման վրա: **3. Թատրոն -** Ուսումնասիրել XVIII - XIX դդ. առաջին կեսի եվրոպական թատերական արվեստը: 4. **Մշակույթ** - Ուսումնասիրել XVIII -XIX դ. առաջին կեսի եվրոպական ճարտարապետությունը:		
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ **Մ1, Մ24, Մ25, Մ26, Մ40, Մ41, Մ42:**		

Թեմա 5. XIX դարի եվրոպական երաժշտության հիմնական ուղղությունները. ռոմանտիզմ	
Նպատակները Ձևավորել գիտելիքներ XIX դարի եվրոպական երաժշտության հիմնական ուղղություններից մեկի՝ ռոմանտիզմի մասին:	**Ուղղորդող հարցեր** Ծանո՞թ եք արվեստի հիմնական ուղղություններին:

1. Ձևավորել ռոմանտիզմի ներկայացուցիչների կյանքը և ստեղծագործական գործունեությունն ուսումնասիրելու հմտություններ: 2. Զարգացնել տվյալ թեմայով հետազոտական կամ նախագծային աշխատանքներ կատարելու հմտություններ: 3. Արժևորել ռոմանտիկ կոմպոզիտորների ավանդը համաշխարհային երաժշտության պատմության զարգացման գործում:	1. Ի՞նչ գիտեք ռոմանտիզմի մասին: 2. Որևէ տեղեկություն ունե՞ք ռոմանտիկ կոմպոզիտորների մասին: 3. Ներկա գտնվե՞լ եք նրանց ստեղ-ծագործությունների համերգային կատարումներին:

Վերջնարդյունքներ

1. **Ստեղծի** (մենակ կամ խմբով) ռոմանտիզմի ժամանակաշրջանի եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:
2. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում կիրառի գիտելիքներ և հմտություններ՝ օգտագործելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ և տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները:
3. **Նպաստի** խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի ձեռքբերմանը:
4. **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով: **Հասկանա** երաժշտական տերմինաբանության իմաստը և գործնականում օգտագործի այն:
5. **Ընկալի և վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, հիմնավորի դրանք, ցուցաբերի վերլուծելու, համադրելու և համեմատելու հմտություններ:
6. **Ընդլայնի** ազգային և եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ) միջոցով:
7. **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ** **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**
1. XIX դարի եվրոպական երաժշտու-թյան հիմնական ուղղությունները՝ ռոմանտիզմ: 2. Ռոմանտիզմի ուղղության հանրա-հայտ կոմպոզիտորները և նրանց ստեղծագործությունները:	1. Կատարել ուսումնասիրու-թյուններ, դիտել համերգներից հատվածներ: 2. Ունկնդրել, վերլուծել, մեկնա-բանել սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները: **3.** Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ և այլն:	Սովորողները, ուսումնասիրելով ռոմանտիզմի ականավոր ներկայացուցիչների կյանքը և ստեղծագործությունը, ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, մարդկանց կենցաղին, մարդկության պատմության շրջադարձային փուլերին, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերություններին,

		արժևորում են նրանց արվեստը և ավանդը երաժշտության զարգացման մեջ:

Միջառարկայական կապեր

1. **Գրականություն** - Ուսումնասիրել եվրոպացի ռոմանտիկ գրողների ստեղծագործությունները, որոնք հիմք են դարձել երաժշտական ստեղծագործությունների համար:
2. **Կերպարվեստ** - Ուսումնասիրել եվրոպացի ռոմանտիկ ուղղության նկարիչների գործերը:
3. **Մշակույթ** - Ուսումնասիրել եվրոպական ռոմանտիկ արվեստի տարբեր տեսակների նմուշները::

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ1, Մ24, Մ25, Մ26, Մ40, Մ41, Մ42:

Թեմա 6.
XIX դարի օպերային արվեստ

Նպատակներ	**Ուղղորդող հարցեր**
1. Ձևավորել գիտելիքներ XIX դարի օպերային արվեստի մասին: 2. Ձևավորել XIX դարի կոմպոզիտորների հանրահայտ օպերաներն ուսումնասիրելու, դրանց մասին հետազոտություններ և նախագծեր ստեղծելու հմտություններ: 3. Կազմակերպել այցելություն օպերային թատրոն և նշված օպերաների դիտում: 4. Արժևորել համաշխարհային օպերային արվեստը:	1. Սիրո՞ւմ եք օպերային արվեստը: 2. Հաճախե՞լ եք օպերային թատրոն: 3. Ունե՞ք նախընտրած օպերաներ: 4. Ինչո՞ւ շատերը չեն սիրում օպերային արվեստը:

Վերջնարդյունքներ

1. **Ստեղծի** (մենակ կամ խմբով) XIX դարի իր նախընտրած ժամանակաշրջանի կոմպոզիտորների օպերային արվեստին նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:
2. **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում ցուցաբերի երաժշտական գիտելիքներ և հմտություններ:
3. **Երգի** (մենակ կամ խմբով) օպերաներից հատվածներ՝ արիաներ, խմբերգեր արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
4. **Իրականացնի** ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբի աշխատանքներին:
5. **Ընկալի և բացատրի** ստեղծագործության գաղափարը, կառուցվածքը, ձևը՝ դ**ասևորելով** ստեղծագործական և անկախ մտածողություն:
6. **Համեմատի և մեկնաբանի** հակադիր կամ նման երաժշտական կերպարները:

7. **Զարգացնի** երաժշտական ճաշակը**, ընդլայնի** եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները, նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ) միջոցով:
8. **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:

Թեմայի բովանդակությունը	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
1. XIX դարի օպերային արվեստ: 2. Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի նշանավոր կոմպոզիտորներ՝ օպերաների հեղինակներ: **3.** Հանրահայտ օպերաների հատվածներ և օպերային ներկայացումներ:	1. Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգներից հատվածներ: 2. Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել, կատարել օպերաների հատվածներ: **3.** Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ:	**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Սովորողները, ուսումնասիրելով XIX դարի օպերային արվեստը, ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղին, նրանց պատմություններին, մարդկության պատմության շրջադարձային փուլերին, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերություններին, արժևորում են հեղինակների արվեստը և ավանդը օպերային երաժշտության զարգացման մեջ:

Միջառարկայական կապեր

1. **Գրականություն** - Ուսումնասիրել այն գրական ստեղծագործությունները, որոնք դարձել են օպերային լիբրետտոներ:
2. **Կերպարվեստ** - Ուսումնասիրել օպերային ներկայացումների բեմական ձևավորումները՝ դեկորները, հագուստները և դրանց համապատասխանությունը երաժշտությանը:
3. **Պատմություն** - Ուսումնասիրել այն պատմական կարևոր իրադարձությունները, որոնք հիմք են դարձել պատմական օպերային լիբրետտոների համար:
4. **Թատրոն** - Ուսումնասիրել և մեկնաբանել օպերային ներկայացումներում երգիչների դերասանական վարպետությունը, որը նպաստում է երաժշտական կերպարի ավելի խոր բացահայտմանը:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ1, Մ24, Մ25, Մ26, Մ40, Մ41, Մ42: